սութիւնն է, որ ունի թարգմանչի լեզուն. մեր լեզուն չի սիրում աւել բառ ասել այնտեղ, ուր առանց այդ բառի էլ միտքը պարզ, որոշ ու հասկանալի է. մեր լեզուն չատախօս չէ, նա սիրում է հակիրճ լինել. Օրինակների թիւը չարժէ բազմացնել. ամեն էջում ընթերցողը կարող է տեսնել. Բայց թարգմանչի գլխաւոր արժանիքի առաջ այդ պակասութիւնը, որ անկասկած չատ մեծ է, կորցնում է իր մեծութեան մի մասը.

Ն. Աղբալեանց

Բարթէոս.—«Տանջւած սրտեր...» վէպ. ա. մասն Թիֆլիզ 1897 Տպարան Մելիք Շահնազ, էջ 114. գինն է 40 կ.

(ՄԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ)

Եթէ չենք սխալւում, սա առաջին անգամն է որ Բարթէոս հանդէս է գալիս մեր գրականութեան մէջ իւր այս վէպով, առանց ի նկարի ունենալու նրա՝ մի երեք-չորս հատ բանաստեղծութիւնները, որոնք այս տարի լոյս տեսան «Տարազ»ում.

Ուշադրութեամբ կարդալով վէպը, մենք եկանք այն եզրակացութեան, որ դա խակ մտքի մի անմիտ արտադրութիւն է, որ ամենևին չարժէր հասարակութեան առաջ դնել. Նպատակ չունենալով բազմակողմանի կերպով քննադատել այս գործը և նրա հարիւրաւոր պակասութիւնները ընթերցողի առաջ դնել, քանի որ դա քննադատների գործն է, մենք միայն մատնացոյց կ'անենք այն վերին աստիճանի տգեղ հանգամանքի վրայ, որով լեկավարւել է Բարթէոս, իւր այս աշխատութիւնը գրելիս. Խօսքս գրական գողութեան մասին է. Բարթէոսի վէպը գրւած է պ. Լեոն Մանուէլեանցի «Խորտակւած կեանք» անուն վէպի ազդեցութեան տակ, որ սկսեց տպագրւել «Մուրճում» դեռ ևս 1897 թւից. տեղ տեղ նոյն իսկ ամբողջ գլուխներ նման են և երբեմն էլ բառացի արտագրած.

Բերենք մի քանի օրինակներ.

1)... Օր. Աշխէնի տարեդարձի օրն էր. Զառիկեանները վճռել էին այս անգամ մեծ չուքով կատարել այդ տօնախմբութիւնը.

«Խորտակ. կեանք» «Մուրճ» 1897 թ. էջ 431.

...Օր. Հեղինէի տարեդարձի օրն էր. Դերձիկեանները ոչինչ չէին խնայել տօնախմբութեան մեծ չուք տալու համար...

«Տանջւած սրտեր» էջ 56.

2)... Տիկին Զառիկեանը վեր էր կացել առաւօտեան կանուխ և թեւերը կչրած՝ հաւաքում էր սենեակները.

«Խորտակ. կեանք» «Մուրճ» էջ 432

...Տիկին Նատալիա Դերեզիկեանը վաղ առաւօտից սկսել էր զարդարել դահլիճը։

«Ցանկալի սրտեր» էջ 56.

3)... Դահլիճի պարկէտը այն աստիճան խստակած մոմած էր, որ նա փայլում էր նոր լակած սեղանի երեսի պէս։

«Խորտակած կեանք», «Մուրճ» էջ 432.

...Ծառան դահլիճի պարկէտը այնպէս էր մոմել ու խստակել, որ նա փայլում էր ճիշտ այնպէս, որպէս վաղ առաւօտեան նորաել արևի ճառագայթների տակ փոքրիկ լճակի հարթ մակերեսոյթը։ «Ցանկալի սրտեր» էջ 56.

4)... Երեկոյեան, մութը ընկնելուն պէս, Զառիկեանների տունը լուսաւորուեց։ «Խորտ. կեանք. Մուրճ» էջ 432.

...Երեկոյեան դեռ մութը չընկած, Դերձիկեանների տունը կարծես հրդեհը բռնկեց... «Ցանկալի սրտեր» էջ 57.

5)... Եւ լուսոյ ճառագայթները խաղում էին բաղի մէջ բարձրացած երկու ակացիաների կատարների վրայ։

«Խորտակ. կեանք» «Մուրճ» էջ 433.

...Լուսոյ ճառագայթները, որպէս չիկացած կապարեայ խուրձ, դուրս էին ցոլացել պատուհաններից և խաղում էին պարտիզի մէջ բարձրացած հասմիկների կատարների վրայ... «Ցանկալի սրտեր» էջ 57.

6)... Դահլիճի լուսաւորութիւնը այնքան առատ էր, որ հեռից նշմարւում էին այնտեղ ջահը, կանդելաբրը և երթևեկող անձանց դէմքերը պրոֆիլ և en face.

«Խորտակ. կեանք» «Մուրճ 433.

...Առատ լուսաւորութիւնը միջոց էր տալիս հեռից նայողին, տեսնել դահլիճի մէջ ջահերը իւր զարդարանքներով, կանդելաբրը և երթևեկող անձանց դէմքերը պրոֆիլ և en fau.

Ինչպէս տեսնում է ընթերցողը, պ. Բարթէոս այնքան անշնորհք է եղել, որ նոյն իսկ չի կարողացել լաւ արտագրել. փոխանակ en face-ի, դրել է en fau.

7)... Այնտեղ դիւանի բարձին կռնակը լենած թեք էր ընկել Ագատեանը. «Խորտակ. կեանք» «Մուրճ» էջ 433.

...Վարսամեանը դիւանի բարձին կռնակը լենած թեք էր ընկել և խորասուզել իւր սովորական մտածմունքների մէջ։

«Ցանկալի սրտեր» էջ 57.

8)... Օր. Աշխէնը՝ իւր կրեմի զոյն շրջազգեստը ֆրֆռացնելով՝ վազեվազ շտապում էր։

«Խորտ. կեանք. Մուրճ» էջ 433.

...Օր. Հեր ինէն կրեմագոյն շրջազգեստը ֆրֆռացներով անցուդարձ էր անում։ «Ցանկալի սրտեր...» էջ 57.

9)...Իսկույն, ուրախութեամբ,—ասաց Գարեգինը, կոկորդը մաքրեց և ախորժալուր բասով սկսեց... Օր. Վարթումեանը հիացած և ակնապիշ նայում էր երգչի երեսին.

«Խորտ. կեանք. Մուրճ» էջ 443.

...Իսկույն, ուրախութեամբ,—ասաց Արտաշէսը և նրա ձայնը որոտաց. Հիւրերը զարմացան նրա ուժեղ, բայց ախորժալուր ձայնի վրայ. Օր. Հեղինէն հիացած և ակնապիշ նայում էր երգչի աչքերին. «Ցանկացած սրտեր» էջ 56.

10)... Շուտով հիւրերը նստեցին ընթրիքի. Դահլիճի երկարութեամբ մի պատից մինչև միւս պատը բաց էին արած սեղաններ՝ ծանրաբեռնուած գինու շիշերով, բազմատեսակ ուտելեղէններով. «Խորտակ. կեանք. Մուրճ» էջ 440.

...Շուտով հիւրերը նստեցին ընթրիքի. Դահլիճի ամբողջ երկարութեամբ բաց էին արած սեղանները, ծանրաբեռնուած գինու շիշերով և բազմատեսակ խորտիկներով. «Ցանկ. սրտեր.» էջ 59.

11)... Սնումեանը մօտեցաւ և խմեց նրա հետ բրուդերշաֆտ.

«Խորտակ. կեանք. Մուրճ» էջ 444.

...Շատերը խմեցին նրա հետ բրուդերշաֆտ.

«Ցանկացած սրտեր» էջ 60.

12)... Ինչ արտիստ է այն դերասանը, որ չը գիտէ իլլիւզիոն, պատրանք առաջ բերել? Նոյնպէս և բանաստեղծութիւնը. եթէ նա անզօր է լափշտակելու մեր հոգին մինչ այն աստիճան, որ մենք ամեն ինչ մոռանանք և մի վայրկեան ապրենք նրա գործած տպաւորութեամբ... «Խոր. կեանք» Մուրճ էջ 427.

...Վարսամեանը արտիստի հմտութեամբ այդ պահուն առաջ բերաւ երկրորդ երգով իլլիւզիոն, պատրանք և բանաստեղծի ճարպիկութեամբ լափշտակեց հիւրերի սիրտն ու հոգին մինչ այն աստիճան, որ նրանք մոռացան ամեն ինչ և մի շարք բոպէներ ապրեցին Վարսամեանի գործած տպաւորութեամբ... «Ցանկացած սրտեր» էջ 60.

13)... Դաշնամուրի առջև կանգնած՝ բոլոր ժամանակ զմայլուած հետևում էր նա օրիորդի երկայն սպիտակ մատներին, որոնք արագութեամբ ետ ու առաջ էին վազում ստեղանունքի վրայ. «Խորտ. կեանք» Մուրճ էջ 438.

...Հեղինէն իսկոյն նստելով դաշնամուրի առջև սկսեց իր բարակ երկար մատները ետ ու առաջ վազեցնել ստեղանունքի վրայ. «Ցանկացած սրտեր» էջ 62.

14)... Օր. Վարթումեանը հրապուրած խօսում էր իր սիրած կոմպոզիտորներից և օպերաներից. «Խորտ. կեանք» Մուրճ էջ 438.

...Նա նստում էր իր սիրած կոմպոզիտորներից և օպերաներից «Ցանկացած սրտեր» էջ 62.

Կարծում ենք, այսքանս էլ բաւական է, ցոյց տալու համար որ Բարթէոսի վէպը գողութիւնների մի քաոս է, մի խառնշփոթ ժողովածու քաղած այստեղից ու այնտեղից. Բաց անելով այս գողութիւնը, մեր նպատակը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ցոյց տալ գրելու տենչով բռնուած մանր գրողների խեղճութեան մի ապացոյց...

Մ. ԵՍԱՅԵԱՆ